

1.2.5. Կապ

Հայաստանի Հանրապետությունում 2002թ. հունվար-փետրվարին, ըստ կապի կազմակերպությունների հաշվետվությունների տվյալների, բնակչությանը, հիմնարկներին, կազմակերպություններին մատուցած ծառայություններից ստացված հասույթի ընդհանուր ծավալը փաստացի գներով կազմել է 6224.2¹ մլն. դրամ, որը նախորդ տարվա նկատմամբ, համադրելի գներով, նվազել է 5.4%²: Նշված հասույթից բնակչությանը մատուցված ծառայությունների բաժինը կազմել է 2952.8 մլն. դրամ:

¹ Հաշվարկված է առանց ավելացված արժեքի հարկի:

² Տեմպը հաաշվարկված է առանց 2002թ. հաշվետու ամսվա թույլեւձարից ստացված հասույթների:
«Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2002թ. հունվար-փետրվարին»